



ԶԱՎԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԻՆԶԻՆՅԱՆ

ՇՆՈՐՀԱՑ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ

Պողոս առաքյալի ուսուցման և առաքելական գործին խորունկ իմաստը, տարողությունը ճիշտ հասկնալու համար, անհրաժեշտ է ներկայացնել անոր կենսագրությունը, նկատի ունենալ ապրած միջավայրը նաև ժամանակաշրջանը:


Ո՞վ է հեթանոսաց այս մեծ առաքյալը: Մոտավորապես քսան տարվան ժամանակամիջոցի ընթացքին, այսինքն 50—70 տարիներու ընթացքին իր զանազան նամակներուն մեջ, ինքն իսկ իր կենսագրության մասին տվյալներ կհայթայթե:

Ծնած է Կիլիկիո Տարսոն քաղաքը. առևտրական կարևոր կեդրոն մը, նաև համբավավոր իր համալսարանով որը այն ժամանակ կմրցեր Ադեքսանդրիոն և Աթենքի համալսարաններուն հետ: Ապահովաբար այստեղ ուսանեցաւ ան ու ընդունեց հունական փիլիսոփայության և մշակույթի լավագույն ավանդությունները: Վստահ կերպով գիտենք թե սահուն կիսուներ ու կգրեր հունարեն լեզվով: Հռոմեական հրպատակություն ուներ, խոշոր առավելություն մը իրեն համար, մանավանդ կայսրության զավառներուն մեջ ապրող քաղաքացիներուն համար, որովհետև եբրայական Սավրոլ անունի հետ կգործածեր նաև հռոմեական ձևով Պողոս անունն ալ:

Ծնունդով հրեա, Բենիամինի ցեղեն, ինչ-

պես ինքն իսկ կվկայե: Թեև հայրենիքեն հեռու, բայց ընտանիքը կպահեր նախնաց ավանդությունները, լեզուն և սովորությունները կամ օրենքները. «չազգէ Իսրայէլի, ի ցեղէ Բենիամինի, եբրայեցի լեբրայեցոյ» և փարիսեցիի զավակ: Հավանաբար մանկության տարիները անցուցած ըլլա Երուսաղեմի մեջ ուսանելով ռաբբիներու մոտ, առ ոտս Գամաղիէլի, խրատյալ ըստ ճշմարտության հայրենի օրինացն. փարիսեցիները որևէ հրեայե ավելի նախանձախնդիր էին մովսիսական օրենքները պահելու և անարատ ըլլալու, ինչպես ինքն իսկ կվկայե իր մասին. «Ըստ նախանձայուզն լինելոյ, հալածէի զեկեղեցին. ըստ արդարութեան օրինացն, լիեալ անարատ» (Փիլիպ. Գ 6):

Նորադարձ քրիստոնյաները ամենայն խստությամբ հալածելու ժամանակ, Դամասկոսի ճամբուն վրա պատահեցաւ իր հոգեփոխությունը, ծանոթ տեսիլքին հետեւանքով. բայց կթվի թե տարիներն ի վեր իր հոգվույն մեջ Պողոս կպատրաստվեր այս տրամաթիք դարձին: Եկեղեցական հայրեր, մեկնիչներ, այս մասին երկարորեն անդրադառնալով, ամենեն ավելի կանգ առած են աստվածային նախախնամության և ս. Հոգվույն ներգործության վրա: Ուրիշներ տակավին փնտռած են այլ ազդակներ,



ինչպես իր ներկայությունը՝ առաջին քրիստոնյաներին նախասարկավագ Ստեփաննոսի սպանության պահուն:

Գործք առաքելոց-ի մեջ վսեմական պարզությամբ, բայց նաև հանկուցիչ ձևով կնկարագրվի թե ինչպես ս. Ստեփաննոս կրացատրե Հին Ուխտի մարգարեական կանխասացությունները, թե ինչպես անոր դեմքը հրեշտակական բարությանը ու պաշտոնությանը կցույր և զինք մեղադրողներուն համար միայն ներողամտություն ուներ: Այս սրտագրավ պատկերը, անմեղ երիտասարդ մը քարկոծմամբ սպանելն ալ չէր կրնար տպավորած չըլլալ մոլեգնած ամբողջը, մանավանդ Սափուղը որուն մոտ քարկոծողները իրենց զգեստները ի պահ դրած էին:

Բարոյական մաքուր ակունքներն սնած, մշակված միտք, Պողոսի ներաշխարհը ալեկոծ էր. ինքիմե դժգոհ, տագնապահար, բարոյական ու հոգեկան պայքար մը զինք կտանջեր փոթորիկէ բռնված մեկու մը նման. քրիստոնյաները հալածելու անհաճանք իր խստությունը ուժեղ ապացույց մըն է այս մասին. չէ՞ որ խթանի դեմ կազացեր: Օրենքին ներքև դաստիարակված ըլլալով և օրինապահ ըլլալուն, անկէ դուրս ունէր քան մեղք կհամարէր: Բայց երբ Քրիստոսի փրկագործական շնորհին վերահասու եղավ, քանի որ «Լուսնն օրինաց սէր է եւ շնորհք եւ ճշմարտութիւն ի ձեռն Քրիստոսի եղեն», ապա ուրեմն Պողոս ուժգնորեն խոտվեցաւ:

Տարիներու իր դաստիարակությունը, ամբողջ մարգարեական ուսուցումը շրջադարձ մը կունենար իր մտքին մեջ: Հոռվ-մեացվոց ուղղած իր թուղթին կամ նամակին յոթերորդ գլուխին մեջ Պողոս առաքյալ սպասուիչ կերպով և ինքնակենսագրության ձևով կրացատրե այս խոտվեքին դրդապատճառը. «Առանց օրենքին. եւ ողջ էի, բայց երբ օրենքին վերահասու եղա, մեղքը կենդանացաւ մեզս և բարոյապես մեռա»: Ապահովաբար մովսիսական պատվիրաններուն վերջինն է որ ի մտի ունի, այսինքն ցանկություն. ուրեմն Սողոմ, կզգա որ մեղավոր է ցանկությամբ և չար խորհուրդով, ուստի Աստուծոյն հեռացած. այլևս իր անձին տերը չէ, այլ բարին գործելու կամենալով հանդերձ, կարողություն չունի, որովհետև մեղքի գերին է: Տառապյալ մարդ մըն է, ո՞վ կրնա զինք փրկել: Միայն

ԾՆՈՐՀՔ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ԶԵՆՆ ՅԻՍՈՒՍԻ ԲՐԻՍՏՈՍԻ:

Հիսուսի մասին շատ լսած պետք է ըլլար անշուշտ. զայն փրկիչ կնայտարարեին

հետևորդները: Բայց Հիսուս մեռած էր խաչին վրա: Միտքը կշարչարվեր տարակույսներով, ոչ թե որովհետև խաչյալ փրկիչ մը ըմբռնելի չէ, այլ մանավանդ Փրկիչը ըստ օրինի, կարելի չէր որ խաչվեր վասնզի հստակ ու որոշ ըսված է—անիծյալ է փայտին վրա կախվողը. «Ձի անիծեալ յԱստուծոյ է ամենայն որ կախիցի զփայտէ» (Բ Օրինաց 21:23): Ուրեմն Սողոմ, չէր կրնար հավատալ Հիսուսի հարություն առած ըլլալուն, որքան ալ որ փաստը մեջտեղը, Երուսաղեմի մեջ ցույց կտրվեր: Չէր կրնար հավատալ նաև անշուշտ Հիսուսի հետևորդներու քարոզություններուն:

Այսպիսի մտածումներով, կասկածներով լեցուն, ահավասիկ Սողոմ փոշեթաթախ, խոնջ, կմամբորդեր Երուսաղեմէ Դամասկոս: Խոտվակոծ իր անձը որքան դժգոհ պետք է ըլլար ինքզինքնն որ այդ դժգոհությունը սաստիկ հալածանքի նախանձա-հուզությամբ հայտնվեր: Երուսաղեմէ Դամասկոս, անջրդի, անտանելիորեն միօրինակ ու անապատացյալ դաշտերու մեջն ճանապարհ մըն է: Ցերե՞կ էր, հետ միջօրե՞ թե մայրամուտ, Սողոմի առջև հանկարծ երկինք բացվեցաւ, կուրացնող լույս մը ճառագայթեց իր դեմ, գետին ինկավ. իր անունը լսեց և հարուցյալ Հիսուս երևցաւ իրեն: «Դժվար է քեզ խթանի դեմ ազացել»: Այդպես, կշտամբվիլն իսկ քաղցր եղած պետք է ըլլա: Առաքյալը ապահով է որ անապատի մեջ երևցող տեսիլք-կրկներեփոյթ մը չէր ինչ որ տեսաւ, քանի որ Հիսուս երևցած էր բազմաթիվ անգամներ առաքյալներուն, Կեփասի, ալելի քան հինգ հարյուր եղբարց, յուրաքեր կիներու, Հակոբին և այլոց և ամենեւէ ետքը իրեն: Ուրեմն խաչյալ Հիսուս՝ Մեսիան պետք էր ըլլալ, քանի որ Աստված հարություն առնել տվաւ անոր: Անիծյալ էր փայտեն կախվողը ըստ օրենքին, բայց քանի որ «ոչ տկարացի առ Աստուծոյ ամենայն բան», այսինքն Աստուծո համար անկարելի բան չկա, ուրեմն պարզ է որ Աստված օրենքը բարեփոխած պետք է ըլլա:

Աստուծո հետ իր հարաբերությունը, Քրիստոսով հասկնալի եղաւ, որովհետև անձնական միջոցներով, օրենքի միջոցով չէր կրցած արդարանալ: Միայն Հիսուս Քրիստոս փրկությունը կրնար տալ իրեն: Ինչու որ ուր որ հանցանքն ու մեղքը բազմաման, հանցագործներն ու մեղավորները կրնան արդարանալ շնորհքով, ի ձեռն Հիսուսի Քրիստոսի. շնորհքը երկնատուր ու անվճար պարգևն է որ կրաշխվի առատապես, ըստ Աստուծո անսահման սիրուն: Ուրեմն հարուցյալ Հիսուսի հայտ-

նությանը, առաքյալը իմացավ հանկարծ, ինչպես փայլատակող լույսը, թե հավիտենական կյանքը կատարվի հավատքով, թե օրենքներն անդին Աստուծո շնորհքը կներգործեն: Հետ այնու, իր ուսուցման գլխավոր առանցքը կազմեց շնորհաց վարդապետությունը որ առատապես, անտրիտուր կըբաշխվի մույնիսկ անոնց որոնք արժանի չեն ատոր:

Տիրուհի ուղղած իր համակի երկրորդ գլուխին մեջ Պողոս կգրե. «Բանգի երեսեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան»: Ուրեմն ըստ առաքյալին փրկության համար անհրաժեշտ է շնորհը, ի ձեռն հավատոց, ազատագրվելու համար մեղքի կապանքներեն, որը մահվան խայթոցն է: Ինչո՞ւ. որպեսզի մարդը առաջնորդվի արդարացման, այսինքն ընդունվի Աստուծոմէ: Պողոս ցույց կուտա միջոցը, շնորհաց վարդապետությունը, որմով մարդ կրնա ծառանգել հավիտենական կյանքը, փափկության դրախտը ուր հարազվարճ բերկրանքով աստվածութեան կարծանանա:

Այսպես է հավատքով ընդունված շնորհը:

Ղուկաս՝ Պողոսի գործակիցն էր և բրժիշկը: Ծատ բան իմացած ու ստրված պետք է ըլլար Պողոսն քրիստոնեության մասին: Բայց երկուքին ուսուցումները որոշ տեղ մը տարբեր ուղղություն կատանան: Երկուքն ալ անշուշտ Հիսուսի փրկիչ ըլլալուն մասին կքարոզեն. Ղուկաս այդ փրկությունը ամբողջ աշխարհին վրա կտարածե, մինչ Պողոս կբացատրե, կուսուցանե թե ինչպես կհասնինք փրկության: Այլ խոսքով Ղուկաս քրիստոնեության ընդհանրական ըլլալուն կամ տիեզերականության մասին կշեշտե, մինչ Պողոս, փրկության անվճար պարգև մը ըլլալուն մասին և կգրե. «Ձի շնորհօք նորա էք փրկեալք ի ձեռն հաւատոցն. եւ այս ոչ ի ձեռն, այլ Աստուծոյ պարգև է» (Եփես. Բ 8):

Դուրին չէ հետևիլ Պողոս առաքյալի աստվածաբանական մտածումներու զարգացման, որոնք կհայտնեն ան իր թողութեան մեջ: Կհավատա, կբացատրե, կշեշտե թե ոչ որ կրնա արդարանալ Աստուծո առջև: Այս պատճառով ալ անշուշտ մեր երանելի շարականագիրը հոգեգրած պետք է ըլլա այսպես, «արդարութեամբ մի դատեսցես, այլ գթութեամբ քով քանեսցես»: Հին Ուխտին մեջ այս հարցը բազմաթիվ անգամներ առաջադրված է և հստակորեն Հոբի գրքին մեջ, երբ այս վերջնույն կհարցվի. «Ձիա՞րդ լինիցի մարդ արդար առաջի Տեառն. կամ ո՞վ սրբեսցէ զանձն իր»: Սաղմոսներգու մարգարե—թագավոր Դավիթ կպատասխանե. «Ձի ոչ արդարանալ

առաջի Աստուծոյ ամենայն մարդ մտելի» (Սաղմոս 143:4):

Սողոս, հավանաբար Երուսաղեմի մեջ առ ոտս Գամաղիել օրենաուսուց ռաբբիի, ստրված էր թե «ով որ արդար կհամարի անհրաժեշտ, պիտի է և զարշնչի» (Բ Օրինաց 17:15): Բայց հետո հանկարծ այս նույն Սողոսը, կզարմացնեն իրավամբ գինք մտիկ ընդունելը, երբ կհայտարարե թե «Այն որ առանց չարի գործերու կհավատա ամբարիշտները արդարացնողին, այն ատեն իր հավատքը արդարություն կսեպվի» (Հռով. Դ 5): Ի՞նչպես կրնա ըլլալ այսպիսի հիմնական փոփոխություն: Ըստ առաքյալին կրնա ըլլալ, որովհետև իր բոլոր համակներուն մեջ ալ շատ գործածած բացատրություններն մեկն է Ի Քրիստոս, այսինքն միանալ Քրիստոսի, այլ խոսքով ինքզինք ունայնացնել՝ արդարանալու համար, որովհետև եթե կապրիմ հիմա, կգրե ան, Աստուծո Որդվույն վերաբերմամբ ունեցած հավատքովս կապրիմ, քանի որ մեզ սիրելուն համար զոհվեցաւ: Եթե օրենքը պահելով կարելի ըլլար արդարանալ, ուրեմն Քրիստոս զո՞ր տեղը խաչվեցաւ. ոչ, Աստուծո շնորհով, ի ձեռն հաւատոց կարդարանալ (Գաղատ. Բ 17): Աշխարհի վրա հազարավոր օրենագետներ կան, օրենքները ուսած, գոց ստրված են: Բայց օրենքը գիտնալը զիրենք արդար չի կացուցաներ, այլայես ամեն փաստաբան սուրբ մը պիտի ըլլար:

Ուրեմն եթե ուզենք Քրիստոսով արդարանալ և շարունակենք մեր մեղավորության վիճակին մեջ մնալ, Քրիստոս մեղքի պաշտոնյա՞ համարենք. ոչ, քալ լիցի: Եթե կառուցածս փլցնեմ, ո՞վ է մեղավորը: Հարկա՞վ ես եմ, իմ անձն է. այնքան ատեն որ օրենքին համար դադրեցա գոյություն ունենալե, կապրիմ Աստուծո շնորհով. առաքյալին բացատրությամբ, «կենդանի է յիս Քրիստոս»:

Իր բոլոր համակներուն մեջ բազմաթիվ անգամներ Պողոս առաքյալ կվերադառնա ու կկրկնե նույն բանը, այսինքն Ան որ անմեղն էր, մարդացալ որպեսզի Իրմով Աստուծո արդարությունը ըլլանք (Բ Կորնթ. Ե 21): Սողոսի մտքին մեջ այսպես պետք է ձևակերպված ըլլար խաչյալ Փրկչին՝ հրեաներուն համար գայթակողությունն ու հեթանոսներուն համար հիմարությունը: Խաչված ըլլալուն նգովքը, հարության իրողությամբ պարտվեցաւ, չբացաւ: Այս հակասությունն ալ հասկնալի կընծայվի անով որ Քրիստոս խաչվեցալ մեր տեղը, մեզի համար: Սկիզբեն նեթ օրենքին խստության ներքև էինք մեր մեղքերուն համար: Ամեն որ գիտե թե նախամարդուն միջոցալ մեղքը

մտալ աշխարհ, Մարդո Որդվույն միջոցալ ալ բարձալ տրամական անեծքը: Ինչպես որ գետի մը ալը թունավորվելով, ամբողջ գետի երկայնքին կրնա տադածվիլ թունավորումը, այնպես ալ մարդկային ցեղը, սկիզբեն մինչև Քրիստոսի մարդեղությունը վարակվեցալ սկզբնական մեղքին թույնով:

Պողոս առաքյալ գաղատացվոց ուղղած իր նամակին երրորդ գլուխի 10-րդ համարին մեջ կհիշե հատակորեն թե՝ «Ձի որ միանգամ ի գործոց օրինացն են, ընդ անիծիւք են. քանզի գրեալ է թէ անհիծեալ ամենայն մարդ որ ոչ կացցէ յամենայն գրեալսն ի գիրս օրինաց առնել զամենայն»: Ուրեմն Քրիստոս փրկեց մեզ օրենքի այս անեծքեն, մեր տեղը խաչվելով: Մեզ ազատ կացուցանելու համար մեղքեն ու անեծքեն, զանոնք իր վրա առալ, քանի որ անհիծեալ է այն որ ծառեն կկախվի, ինչպես տեսանք արդեն Բ Օրինաց մեջքերումեն: Ի՞նչ պետք է հասկնալ այստեղ անեծք բացատրությամբ: ՄԱՀԸ: Մեղքին պատճառալ Աստուծոմն հեռանալը, բարոյական կյանքին մեջ մահ է: Քրիստոս մեռալ մեզի համար, մեր տեղը: Եթե ապրիմք ի Քրիստոս, որովհետև Քրիստոս մեզի համար մեռալ, ուրեմն կնշանակե թե մեռած ենք Քրիստոսի հետ: Քրիստոսի հետ մեռնելով և հարություն առնելով, օրենքին պահանջքը կատարյալ կամ լցալ ըլլալով, կազատագրվինք: Ծառ դյուրահասկնալի է այլևս թե ինչու առաքյալը կըսե թե, խաչված ըլլալով Քրիստոսի հետ, այլևս ես ինքս չե որ կապրիմ, այլ Քրիստոս որ հիս: Աստուծո անսահման ողորմությունն ու սերը դրկեց իր միածին Որդին որ մարմնացալ, մարդացալ, մեռալ բոլորին համար: Ուրեմն ըստ առաքյալին, Իրմով բոլորը մեռան մեղքին համար: Մեռալ, որպեսզի ապրողները ոչ թե իրենք իրենց համար, այլ Հիսուսով ապրին որը իրենց համար մեռալ, սակայն հարյալ: Մեղքին համար մեռալ և հԱՍՏՎԱԾ կենդանացալ, ուստի դուք ևս մեռաք մեղքին համար և կենդանի եք հԱՍՏՎԱԾ ի ձեռն Հիսուսի Քրիստոսի: «Ձի որ մեռան» մեղացն մեռալ միանգամ ես որ կենդանին է, կենդանի է Աստուծոյ: Նույնպես ես դուք համարեալք զանձինս մեռեալս ես կենդանիս յԱստուծո ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռովմ. 2 10—11):

Անշուշտ հավատքով կրնանք միանալ Հիսուսի արդարանալու համար և ասոր գլխավոր խորհրդանշանն է մկրտությունը: Առաքյալը չի խուսափիր կրկնութենե հասկնալի ընծայելու համար թե մարդկային մեր միջոցներով անհնար է հասնիլ փրկության. այլապես Քրիստոս ի զոր աշխարհ եկած պիտի ըլլար: Այս պատճառալ արդեն

խաչին ճառը, գալթակոյության քար եղալ իրենց համար: Դարձյալ զուգակշիռ մը ընելով Հին և Նոր Ուխտին միջև, Պողոս՝ Հին Ուխտի մեծ դեմքերեն Մովսեսի համար կըսե թե բարոյական օրենքներու դրություն մը հաստատեց որոնց պետք էր հետևիլ, մինչ Հիսուս շնորհ պարգևեց: Մովսեսով մարդիկ պետք է գործեին, Հիսուսով անհրաժեշտ է հավատալ: Հին Կտակարանին մեջ ի գործոց կարդարանան մարդիկ, իսկ Նոր Ուխտի մեջ, շնորհով ի ձեռն Հիսուսի Քրիստոսի: Մովսեսով մարդիկ օրենքին գերին են, մինչ Հիսուս մեզ ազատ կկացուցանե իբրև Աստուծո որդիներ:

Այս բացատրություններն ետք որքան պայծառ, հասկնալի կդառնա փարիսեցիին և մաքսավորին առակը որոնք տաճարին մեջ աղոթելու կեցած էին:

Իսկ եթե հարցվի թե օրենքը ինչու՞ տրվեցալ մարդկության, ի՞նչ օգուտ ունեք: Կպատասխանենք. աստվածային հայտնությունը մինչև Քրիստոս, մասնակի տրվեցալ, հատուկ ժողովուրդի մը մեջ են ընտրյալ մարդոց կողմն որոնք մարգարեներ կկոչվեին: Մարդկությունը իր երեխայության վիճակին մեջ էր տակավին: Երեխային կարծր կերակուր չեն տար քնակաճաքաք. ուրեմն օրենքը տրվեցալ ուսուցանելու և մարդկությունը պատրաստելու համար: Բայց լրումն օրինաց Քրիստոս է, հարդարություն ամենայն հավատացելոց (Հռով. 10:4):

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆԸ՝ ԵԿԵՂԵՑԻՆ

Ինչպես տեսանք, վերին աստիճանի հեռաքրքրական է Պողոս առաքյալի արդարացման ապա արբացման մասին վարդապետությունը: Հավատացյալը Քրիստոսի հետ մեռած է մեղքին համար և Քրիստոսի հետ հարություն առած է մեր կյանքի մը համար: Անմիջապես զուգահեռականներ հիշենք Հին և Նոր Կտակարաններեն: Նախամարդ Ադամի միջոցալ մեղքը մտալ աշխարհ: Նոր Ադամի՝ այսինքն Քրիստոսի միջոցալ բարձալ մեղքը և անոր խայթոց՝ մահը:

Բաբելոնի մեջ, աշտարակաշինության ժամանակ, լեզուները իրար խառնվեցան: Իսկ ս. Հոգվույն գալստյամբ՝ լեզվախոսության շնորհներ տրվեցան: Եգիպտոսն ելքի ժամանակ, իսրայելացիները Կարմիր ծովեն անցան և մահվրեն ազատեցան: Իսկ քրիստոնյաները մկրտության ջուրեն կանցնին և կշնորհագարդվին մեղքեն ազատ ըլլալու համար: Իսրայելացիները Սինեական անապատին մեջ մահանա կերան, և անոթի վիճակը անցուցին. Միածին Որդին

Իր իսկ Մարմինը տվավ որուն ճաշակմամբ, քրիստոնյաները կապին: Ծարքը կարելի է անշուշտ երկարել, բայց այսքանը բավ է Հին ու Նոր Կտակարաններում միջև գուգահեռականները ցույց տալու համար: Ահավասիկ և Պողոս առաքյալի հոովմեացվոց ուղղած նամակի վեցերորդ գլուխի բացատրությունը այս մասին: «Մեղքին համար մեռած ենք. երբ կմկրտվինք, ի Քրիստոս կմկրտվինք ի մահ Քրիստոսի: Մկրտությամբ ուրեմն կթաղվինք իր հետ, խորհրդանշական կերպով, որպեսզի, ինչպես Քրիստոս Հոր փառքովը հարության առավ մեռելներեն, այնպես ալ մենք կյանքի նոր ճանապարհի մեջ մտնենք: Մահվան մեջ իրեն նմանելով, հարությամբ ալ իրեն պիտի նմանինք: Գիտենք որ հին մարդը խաչակից եղավ Քրիստոսի, որպեսզի մեղքերը խափանվին և այլևս մեղքին գերին չըլլանք: Եթե Քրիստոսի հետ մեղքերուն համար մեռած ենք, կհավատանք թե իր հետ պիտի ապրինք: Հարուցյալ Քրիստոս անգամ մըն ալ չի կրնար մեռնիլ, մահը չի կրնար տիրել Անոր: Մեղքին համար մեռած ենք և ողջ ենք հետևած, Հիսուս Քրիստոսի ձեռամբ (Հռովմ. 6:11):

Պողոս առաքյալի ուսուցմամբ, արդարացման հաջորդ քայլն է սրբացումը, քանի որ «Քրիստոս եղավ մեզ համար Աստուծո իմաստությունը նաև արդարություն և սրբություն և փրկություն» (Ա. Կորնթ. Ա. 31): Ի հարկե արդարացման և սրբացման ճանապարհին վրա, կարելի չէ ձեռնաձայ սպասել և ըսել ու կրկնել թե Հիսուս մեր փրկությունն է: Ժիշտ կըլլա՝ եթե մեր տան բոլոր փեղկերը փակենք և ըսենք թե լույս չկա: Կամ աման մը գլխիվայր դնենք անձրևին տակ ու սպասենք որ ջուրով լեցվի: Փիլիպեցվոց ուղղած նամակին մեջ առաքյալը կհորդորե արդարացման համար հանապազ աշխատիլ, ճիգ ի գործ դնել. «ահի եւ դողությամբ զանձանց փրկութիւն գործեցէք» (Փիլիպ. Բ. 12):

Պողոս առաքյալի թողթերը կարելի է գլխավոր երկու մասերու բաժնել: Առաջին մասը վարդապետական, այսինքն հավատքի վերաբերյալ. երկրորդը՝ բարոյական, այսինքն ընդհանրապես քրիստոնեական կյանք ապրելու կամ ընթացք ունենալու մասին: Եփեսացվոց առաջին և երրորդ, Փիլիպեցվոց առաջին, Կողոսացվոց առաջին գլուխներուն մեջ կբացատրե ճշմարտության, սիրո, արդարության, համբերության և ուրախության մասին: Հռովմայեցվոց 13-րդ գլխուն մեջ կհորդորե քրիստոնյաներուն հպատակ ըլլալ և հնազանդիլ իշխանության, տուրքերը վճարել: Ամուսիններուն կը խրատե սիրել իրենց կիները. կիներուն

կապտվիրե հնազանդ ըլլալ ամուսիններուն: Խստիվ կպախարակե գողությունը, ստախտությունը, բարկությունը, ծուլությունը, արբեցողությունը, բայց ամենն ավելի կհորդորե սիրել զիրար, որովհետև սերը լրումն է օրինաց (Հռովմ. 8:10): Այս բոլորը այնքան թարմ են, հաղորդական, պատգամներ են նաև այսօրվան մարդոց համար որ իբրև թե երկու հազար տարիներ անցած չըլլային անոնց գրության թվականին վերայեն:

Սրբակյաց կյանք մը մի միայն մարդկային ճիգերով ձեռք չի ձգվիր ըստ Պողոս առաքյալին, այլ Աստուծո շնորհով, ինչպես արդարացումն ալ Աստուծո պարգևն է: Ծշմարիտ քրիստոնյան, զինվորի մը նման Աստուծո զեն ու զրահը պարտի զգեճույ որպեսզի նետս մոխս չարին շիջուցանե և հաղթանակը տանի: Հարատև կոիվը միայն խավարի աշխարհակալության դեմ չէ որ կմղվի, այլ նաև մարդկային մարմնին դեմ, չարը, սխալը, մեղքը գործելու միտումին դեմ: Այլ սակայն Հիսուս Քրիստոսի հետ միացած քրիստոնյան չի կրնար դատապարտվիլ, որովհետև Հոգվույն կենսատու օրենքը ազատած է, ավելի ճիշտը շնորհը ազատած է այլևս մարդը մեղքի ու մահվան օրենքեն: Ըսինք թե օրենքը չի կրնար փրկել, որովհետև մարդկային մեր բնությունը կտկարացնե զայն իր կարելիություններեն, հետևաբար Աստված կօգնե մեզի, իր Միածին Որդին դրկելով, որ մեր մեղավոր բնությամբ մարմնին նըման կմարմնանա և կդատապարտե մեղքը, ոչ թե ըստ մարդկային օրինաց, այլ ըստ Հոգվույն: Ուրիշ խոսքով, դարձյալ և միշտ, մովսիսական օրենքը չէ որ փրկությունը կերաշխավորե, այլ Քրիստոսի շնորհը որ Հոգվույն պարգևն է և մեզ կշնորհազարդե: Մեղավորը հավատքով կարդարանա: Գիտենք, կըսե Պողոս առաքյալ թե մարդ միայն օրենքը գործադրելով չի կրնար արդարանալ, այլ ի Քրիստոս Հիսուս հավատքով: Կհավատանք Քրիստոսի, որպեսզի այս հավատքով ալ կարդարանանք և ոչ թե օրենքին գործերով (Գաղ. 2:16): «Այդչա՞ր անմիտ եք որ չհավանաք թե ս. Հոգվույն շնորհները կստանաք ոչ թե օրենքին միջոցով, այլ հավատքին» (Գաղ. 3:2): Սրբությունը արտաքին ազդակներն չէ որ կրկի, այլ ներքին մարդուն պտղաբերումն է: Մարմինը կցանկա հակառակ հոգիին. որովհետև հայտնի են մարմնին գործերը, ինչպես օրինակ, նախանձ, շնություն, բարկություն, հակասակություն, հերձված, անառակություն, սպանություն և ինչ որ ասոնց նման են: Իսկ Հոգվույն պտղներն են, սեր, խնդություն, խաղաղություն, համբերու-

թյուն, քաղցրություն, բարություն, հավատք, ժուժկություն։ Իսկ այսպիսիներուն օրենքը հակառակ չէ արդեն։ Ապա ուրեմն ի՞նչպես կրնանք Հոգվույն պտուղները արդյունավորել մեր կյանքին մեջ։ Եթե իրոք Հոգին է որ կառաջնորդվինք, ապա ուրեմն մեր մարմնին հոռի ցանկությունները չենք կատարեր։ Անոնք որոնք ըստ մարմնին, մարմնավոր բաներու մասին կխորհին, իսկ անոնք որ ըստ հոգվո են, հոգևոր բաներու մասին կխորհին։ Անշուշտ առաքյալը արդարացման ու սրբացման մասին երբ կխոսի, ի մտի ունի հույսը որ հավիտենական կյանքի ակնկալությունն է որուն համար կըսե թե «օրը պիտի գա, գիշերը հասնող գողի նման։ Մարդիկ պիտի ըսեն թե խաղաղության և շինության ժամանակ է։ Բայց այդ օրը հանկարծակի կուգա։ Դուք խավարի մեջ չեք, այլ լույսի որդիներ եք, հետևաբար փրկության հույսին սաղավարտը դրեք, հավատքի և սիրո զրահը առեք և զիրար մխիթարեցեք» (Թեաաղ. Ա. Ե:3)։

Բնականաբար Պողոս առաքյալ այսպես կվարդապետե ոչ միայն անհատ քրիստոնյային կամ նորադարձ հավատացյալին, այլ Քրիստոսի եկեղեցին կառուցանելու համար։ Տևաբար կխոսի սիրո և հավատքի մասին եփեսացվոց, գաղատացվոց, թեսալոնիկեցվոց. կողոսացվոց ուղղած նամակներուն մեջ և կուտուցանե թե կարևորը թլփատությունը կամ անթլփատությունը չէ երբեք, այլ ՀԱԻԱՏՔ ՄԻՐՈՎ ՅԱԶՈՂԵԱԼ։ Ի Քրիստոս հավատքը բացարձակ ստուգության կվերածվի, երբ անանձնական սիրով սիրենք մեր շուրջի մարդիկը, որովհետև ինչպես հիշեցինք քիչ մը վերը ի ձեռն հավատոց կատանանք հոգին և հոգվույն առաջին պտուղը սերն է։ Քանի որ ամենքս ալ Աստուծո որդիներ ենք, ուրեմն իրարու ալ եղբայրներ ենք։ Հավատքի միջոցալ, ի Հիսուս Քրիստոս, Աստուծո որդիներ ենք, ուրեմն իրարու ալ եղբայրներ ենք, հետևաբար ի Քրիստոս մի ենք, ուստի խորություն չի կրնար ըլլալ ոչ ցեղային և այլ և ոչ ալ արտի և էգի։ Ահա թե ինչու հեթանոսներու առաքյալի ամենեն ավելի գործածած բառերեն մին է «եղբայր»։ Կորնթացվոց ուղղած նամակին մեջ կգրե թե «անըմբռնելի է որ եղբայր մը իր եղբոր դեմ դատի դիմե այն ալ անհավատներուն առջև։ Միմեանց բռնի բարձեք եւ այնպէս Տեսնո ծառայեցէք» ուսուցանողը, ինք օրինակ կուտա եղբայրության, Մակեդոնիո եկեղեցիներեն Երուսաղեմի եկեղեցիներուն համար հանգանակություն կազմակերպելով։ Հակառակության միջնորմը Քրիստոսով բանդված ըլլալուն համար, հրեան ալ հեթանոսն ալ Աստուծո թագավորության քաղաքացիները

կրնան ըլլալ։ Ահապահիկ «Խորհուրդը» որ ծածկված էր առաջ և հայտնվեցաւ Պողոսին։ «Այսուհետև օտար և պանդուխտ չեք, այլ արդարներու քաղաքակից և Աստուծո ընտանիք, առաքյալներու և մարգարեներու հիման վրա կառուցված որոս անկյունքարը ինքն Հիսուս Քրիստոս է որմով ամբողջ շենքը հողայլ և պատշաճալ է իբրև սուրբ տաճար» (Եփես. 2:19) և «Ես, Պողոս ձեր իսկ օգտին համար եկեղեցվո պաշտոնյա եղա նշանակվելով Աստուծո կողմէ որպեսզի քարոզեմ և հայտնեմ դարերէ ի վեր ծածկյալ խորհուրդը և որ ահապահիկ կհայտնվի հեթանոսներու առջև խորհուրդին մեծության փառքը, այսինքն Քրիստոս, հույսն փառաց զոր մենք կըքարոզենք» (Կողոսացվոց 1:26)։

Այնուհետև Պողոս առաքյալ կբացատրե հոգվո և մարմնի հարաբերության մասին, այսպես. «... Հոգին հավատքով կընդունինք վասնզի Հոգին Աստուծո որդիներուն մեջ կընակի։ «Աստուծո որդիներ ըլլալնիս ապացուցված է անով որ մեր սրտերուն մեջ դրկած է Աստված Իր Որդվույն Հոգին որ կաղաղակե աբբա, հայր, հետևաբար այլևս ծառա չենք այլ որդի. եթե որդի ենք, ապա ուրեմն ծառանգակից ենք Քրիստոսի» (Գաղ. 4:6)։ Հոգին մեկ է և անբաժանելի։ Քրիստոսի հիմնած եկեղեցին ալ մեկ է ինչպես հավատո հանգանակին մեջ ալ ճշոված է արդեն. «Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական... եկեղեցի»։ Մի է Մարմին և մի է Հոգի. «Մի Մարմին եւ մի Հոգի, որպէս եւ կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ» (Եփես. 4:4)։ Այլուր, դարձյալ առաքյալը ավելի հստակ կբացատրե. «Թեև բազմաթիւ անդամներ ունինք, բայց մարմինը մեկ է. նույնպէս և Քրիստոս մեկ մարմին է, բայց բազմաթիւ անդամներ ունի. ամենքս ալ մի ենք, ի Քրիստոս Հիսուսս. Հոգվույն մկրտությամբ» (Ա. Կորնթ. 12:13)։ Մարմինը մեկ է որովհետև հոգին մեկ է։ Ուստի եկեղեցիին կրթությունը չէ որ պիտի ստեղծվի, մեկ է արդեն. ալ միայն պետք է պահվի, տրված ըլլալով որ կըհրահանգե առաքյալը «փութալ պահել ըզմիաբանութիւն Հոգւոյն յօդի խաղաղութեան» (Եփես. 4:3)։ Ուրեմն բոլոր հավատացյալներն ալ ի հաղորդության կրնան ըլլալ, քանի որ բեկյալ հացը հաղորդություն է Քրիստոսի Մարմնույն. «Զի մի հաց, մի մարմին ենք բազումքս, զի ամենեքքին ի միոջէ հացէ անսի վայելեմք» (Ա. Կորնթ. 17)։

Պարզ է ուրեմն որ եկեղեցին Քրիստոսի Մարմնին է, խորհրդանշական իմաստով։ Քրիստոս գլուխ է եկեղեցվո. «Քրիստոս» պատկերն է աներևույթ Աստուծո, բոլոր

արարածներուն անդրանիկը կամ պետը. իրմով ստեղծվեցան երկրի և երկնքի մեջ տեսանելի և անտեսանելի ամեն ինչ. ամբողջ տիեզերքը իրմով ստեղծված է, ամենքեն առաջ գոյություն ունի և ամեն ինչ իրմով գոյություն ունի: Նա է գլուխ մարմնո որ է եկեղեցի: Սկիզբն է, մեռելներեն առաջին հարուցալը և ամեն ինչի պետը: Իրմով կամ իր մեջ Աստուծո լրությունը կրթակի» (Կող. Ա. 16—19):

Աստուծո ողորմությամբ կաճի եկեղեցին: Ա. Հոգին յուրաքանչյուրին առատապես կբաշխե հոգևոր պարգևներ: Բայց ամենքն ալ մույն պարգևները չունին: Ինչպես որ մարդկային մարմինն ալ մեկ է, բայց բազմաթիվ անդամներ ունի, յուրաքանչյուրը իր ուրույն գործունեությամբ, այնպես ալ եկեղեցվո մեջ յուրաքանչյուր քրիստոնյա ունի իր ուրույն շնորհը: Այս երկնատուր ընծաները իրարմե տարբեր են, համաձայն յուրաքանչյուրի կարիքներուն. բայց բոլորն ալ տրված են ի շինություն և եկեղեցվո: Ահավասիկ և Հոգվո պարգևներուն ցանկը. — «Ոմանց առաքելական, մարգարեական, ավետարանչական շնորհ տվալ, այլոց հովվական, վարդապետական կամ ուսուցողական, որպեսզի Աստուծո ժողովուրդին ծառայեն և կառուցվի Քրիստոսի Մարմինը աշխարհիս վրա որ է եկեղեցին»:

Այս բոլոր բացատրություններն վերջ, Պողոս առաքյալ կիսուի և շեշտը կդնե մասնավոր կերպով քահանայության մասին: Քահանայության մասին ուսուցումը Պողոս առաքյալի վարդապետության մեջ իր ուրույն տեղը ունի:

Գործք առաքելոց-ի մեջ (14:23), կատարվի թե Պողոս, առաքելական ճամբորդություններու ընթացքին, երեցներ ձեռնադրեց: Հովվական իր ճամակներուն մեջ հորդորներ կուտա Տիտոսի և Տիմոթեոսի, այսինքն Կրետեի և Եփեսոսի եկեղեցիներու առաջնորդներուն, այն մասին թե ինչպես էպիսկոպոսներ պետք է մշակակել: «Ժողովրդական բացատրություն մը կա, կարե Պողոս առաքյալ. թե, ով որ եպիսկոպոսության կցանկա, բարվոք գործո կցանկա: Եպիսկոպոսը պետք է անարատ ըլլա, հավատարիմ իր միակ կնոջ, լրջամիտ, հեզ, պարկեշտ, հյուրասեր, ուսուցիչ. ոչ արբեցող, ոչ կովազան, այլ հանդարտ. ոչ արծաթասեր, իր տան բարվոք վերակացուն ըլլալով, հարգանք վայելե. եթե իր տան վերակացուն չկարենա ըլլալ, հապա ինչպէս Աստուծո եկեղեցիին խնամակալ կըլլա: Ոչ քրիստոնյաներուն առջև լավ անուն ու համբավ ունենա, որպեսզի նախատիքի կամ պարսավի տեղի չտրվի: Նույնպես և

սարկավագները, շատախոս, զինեսեր, ազառ չըլլան» (Ա. Տիմ. 1:9):

«Ձեզմե մեկը թող չըսե թե ես պողոսյան եմ կամ ապողոսյան, ի վերջո ո՞վ է Պողոս, ո՞վ է Ապողոս. Աստուծո ծառաներն ենք և հավատքը կբարոզենք, մեզի տրված շնորհին համաձայն: Մին կտնկե, մյուսը կշրե, բայց Աստված կաճեցնե: Մշակին վար ու ցանով կամ ջրտուրով չէ որ կաճի, այլ Աստված կաճեցնե» (Ա. Կորնթ. Գ. 5—8): Կապելցնե նաև որ հոգևորականներուն հարգանք մատուցվի, անոնց կատարած գործին համար. «Կաղաչենք ձեզ եղբայրներ», կգրե, «անոնք որոնք ձեզի համար կվաստակին և ի Տեր ձեր վերակացուներն են ու խրատիչ, անոնց գործին համար իսկ, առավել սիրո և հարգանքի արժանի համարեցեք զանոնք» (Ա. Թեսալ. 5—12): Այս բոլորն են ետք, եկեղեցվո ներքին վարչության վերաբերմամբ, գործնական հրահանգներ ալ կուտա, հավատքը ամխաթար պահելու, համապազ ուրախ ըլլալու, հավաքական աղոթք ընելու, գոհանալու, բայց բոլորն ալ վելի և համեմայնի կպատվիրե սիրել եկեղեցին, այսպես— «Ճշմարտեալք սիրով՝ աճեցուցուք ի նա զամենայն, որ է գլուխ Քրիստոս» (Եփես. 4:15):

ՔՐԻՍՏՈՆՅԱՆՈՒՆ ՓԱՌԱՎՈՐՈՒՄԸ

Քրիստոնյան ոչ միայն որդի է և եղբայր, բայց այդու իսկ ժառանգ Աստուծո և ժառանգակից Քրիստոսի: Թեև տակավին չէ ժառանգած, սակայն ստացած է առաջին պտուղները և Հոգիին. «Ա. Հոգվույն պարգևները ունինք. կհեծենք որդեգրության ակնկալությամբ և մարմնապես փրկվելու համար: Հույսով կապրինք, բայց հույսը չի տեսնվիր: Սակայն ինչու՞ հույս ունենանք տեսանելիին համար: Չտեսնվածին համար կհուսանք և հույսը համբերություն կուտացանք» (Հռովմ. 8:23):

Աստվածաբանական վերոհիշյալ դրությունն հստակ կերպով հասկնալի կըլլա թե քրիստոնյային եկեղեցվո անդամակցութենեն կամ ի հաղորդության ըլլալեն, արդարացումն և սրբացումն ենք, հաջորդաբար պիտի ըլլա իր փառավորումը: Ասիկա այլևս Աստուծո մեզի տված շնորհներուն պսակազարդումն է: Բազմաթիվ անգամներ կրկնեցինք թե, ըստ առաքյալին, ի Քրիստոս ըլլալ, մեզ կարողարացներ: Հռովմեացվոց ուղղած իր ճամակին ուրեթորդ գլուխին սկիզբը կգրե ան— «Ոչ է դատապարտութիւն այնոցիկ որք են ի Յիսուս Քրիստոս»: Ուրեմն ո՞վ կրնա Աստուծո ընտրյալները մեղադրել: Աստված է որ

կարդարացնե. ո՞վ կրնա դատապարտել: Թաղյալ և հարյալ Քրիստոս ընդ աջմե Աստուծո է և բարեխոս է մեզի համար: (Հոով. 8:33):

Հեթանոսաց առաքյալը վատահ է քրիստոնյայի ապագային մասին, որովհետև ստուգապես գիտե, կհավատա Աստուծո առատահոս շնորհաց մասին: Անշուշտ մեր ծնունդեն առաջ, մեզ շատ լավ գիտե մեր ստեղծիչը: «Անոնք որոնք զԱստված կսիրեն, զանոնք կկոչե, կհրավիրեն կերպարանակից ըլլալու իր Որդվույն, որպեսզի եղբայրներու մեջ երեց կամ անդրանիկ ըլլա: Անոնք որ սկզբնապես նշանակեց Աստված, զանոնք կոչեց. անոնք որ կոչեց, զանոնք արդարացուց, անոնք որոնց արդարացուց, զանոնք փառավորեց» (Հոով. 8:29): Ուրեմն շնորհով՝ ի ձեռն հավատոց, արդարանալե և սրբանալե ետք, հուսով ժառանգորդ կը դառնանք հավիտենական կյանքին: «Ոչ թե մեր գործերուն կամ բարեգործություններուն համար, այլ աստվածային ողորմության համար փրկություն կտրվի, մկրտության ավագանեն վերստին ծննդյամբ և ս. Հոգվույն նորոգմամբ: Որովհետև առատացան պարգևները ի ձեռն Հիսուսի Քրիստոսի, ուստի շնորհով արդարացած, հուսով ժառանգավոր կըլլանք հավիտենական կյանքին» (Տիտոս Գ 5—8): Մեղավորը հավատքով կփրկվի, հուսով կցնծա: Ահավասիկ վկայությունը—«Այսուհետև արդարացեալք ի հաւատոց, պարծիմք յուսով փառացն Աստուծոյ» (Հոով. 5: 1—2): Պետք կա՞ վերստին ճշդելու թե հավատքը իրեն նշանակետ ունի զՀիսուս և իր խաչը. իսկ հույսը՝ հավիտենական փառքը: Ի՞նչ է քրիստոնյային հույսը: Ի՞նչ փառավորության կանգարկե առաքյալը: Հավիտենական կյանքի բերկրայից ակնկալությունն է այս հույսը, որ ամուր է ծայրի նման և ստուգություն ուր անորոշություն ու կասկած տեղ չեն կրնար ունենալ: Անշուշտ Քրիստոս է այս փառքին հույսը:

«Ծատ սերունդներն և երկար դարերն ի վեր, ծածկյալ խորհուրդը հայտնեց Աստված իր ժողովրդյան, ըստ իր բարեսեր կամքին, այսինքն Քրիստոս, հույսն փառաց» (Կողոս. Ա 27): Քրիստոս որ ի մեջ մեր հայտնեցավ, հավիտենական երանության առհավատչյան մեզ տվավ: Արդ՝ ի՞նչ է այս հույսը ուրեմն որուն մասին այսքան խոր ու ընդարձակորեն կքարոզե առաքյալը. տակավին, ի՞նչ է այս փառքը:

Ա. ԲՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ

Այս առիթով ստացվելիք արդարության պատկեր: Ահավասիկ վկայությունը. «Այսու-

հետև կայ եւ մնայ ինձ արդարութեան պըսակն, զոր հատուցե ինձ Տէր յաւոր յայնմիկ արդարն Դատաւոր» (Բ Տիմ. 4:8): Իսկ Քրիստոսի վերստին հայտնության մասին այսպես կգրեն—«Իսկ յորժամ Քրիստոս յայտնեցի կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեցիք փառք» (Կողոս. Գ 4): «Զի ինքն Տէր ի ձայն հրեշտակապետի եւ ի փող Աստուծոյ իջանէ յերկնից եւ մեր յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք» (Ա Թեսալ. Գ 15): Հույսը ուրեմն Քրիստոսի գալուստն է որուն ակնկալությամբ ապրեցան միլիոնավոր հավատացյալներ և միշտ ալ պիտի հավատան:

Բ. ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Առաջին քրիստոնյաները կհավատալին թե Քրիստոս դարձյալ պիտի գար երբ դեռ ողջ էին իրենք. նույնիսկ Պողոս առաքյալ ալ այսպես կհավատար, երբ կգրեր. «Մեք որ կենդանիքս եմք մնացեալք ի գալստեան Տեառն». հետո Ա Կորնթացւոց ԺԵ գլուխի 57-րդ համարին մեջ կավելցնեն. «ամենքս չէ որ մեռած պիտի ըլլանք, բայց ամենքս ալ պիտի նորոգվինք»: Այս մասին մտահոգված թեսաղոնիկեցւոց կբացալերե և կգրեն թե՛ «Մեղալք հառաջագույն հարիցեն ի Քրիստոս և հետո մենք որ ողջ ենք պիտի հափշտակվինք ամպերուն հետ Տիրոջ առջև և իր հետ պիտի ըլլանք»:

Անշուշտ վերին աստիճանի հետաքրքրական է վախճանաբանական գրականությունը: Պողոս առաքյալ այս մասին ընդարձակ տեղեկություններ կուտա: «Իսկ մենք որ ողջ մնացած ենք տակալին, հանկարծակի, ակնթարթի մեջ պիտի նորոգվինք, երբ փողը գոչե. որովհետև փող պիտի հնչե, մեռելները հարություն պիտի առնեն առանց ապականության: Ապականացուն՝ անապական պիտի ըլլա. իսկ մահկանացուն՝ անմահություն պիտի զգենու» (Ա Կորնթ. 15: 51—54): Ուրեմն ինչի՞ պիտի նմանի հարուցյալ մարմինը: Հարկավ մեր այժմու մարմինը բաղկացնող մասնիկները հրաշքով իրար քով պիտի չգան, քանի որ «մարմին եւ արին ոչ ժառանգեն զարքայութիւնն Աստուծոյ»: Նոր մարմին մը պիտի ըլլա որ հինը հիշեցնէ թեև, բայց տարբեր բաղադրությամբ, ինչպես որ պտուղը և հունտը տարբեր են իրարմե: Ի՞նչպես հարություն պիտի առնեն մեռյալներ, կամ ի՞նչ մարմնով պիտի հառնեն հարցումին, այսպես կպատասխանե առաքյալը—«Ամփոտ, դուն որ կսերմանես, մինչև որ սերմը չմեռնի, չի կենդանանար. և ինչ որ սերմանես, հունտին մարմնով չէ որ կբուսնի, հապա Աստված ինչ մարմին որ տա արդես: Ամեն

մարմինն նույնը չէ: Մարդոց, անասնոց, թռչուններու, երկրավորներու և երկնավորներու մարմինները տարբեր ու անոնց փառքըն ալ տարբեր է: Մեռյալներու վերաբերմամբ ահավասիկ, «Կսերմանվի ապակա-նությամբ և կհառնե անապական: Կսերման-վի տկարությամբ, կհառնե զորությամբ: Կսերմանվի շնչավոր, կհառնե հոգևոր» (Ա. Կորնթ. ԺԵ 35—45): Այստեղ Պողոս առաքյալ կհիշե Բրիստոսի հարությունը իբրև գերագույն օրինակ և կգրե—«Բրիստոս մեռավ մեր մեղքերուն համար և ըստ մարգարեական գիրքերուն, թաղվեցավ և երրորդ օրը հարություն առավ: Հետո շատերուն երեցավ, ամենեկն վերջը ինծի ալ երեցավ: Թե ես և թե մյուս առաքյալները այսպես հավատացիրք ու այսպես կքարոզեմք: Եթե մեռելներու հարություն առնել չկա, ապա ուրեմն Բրիստոս հարություն չէ առած: Եթե Բրիստոս հարություն չէ առած, ուրեմն ընդունայն է մեր քարոզությունը, ընդունայն է և ձեր հավատքը» (Ա. Կորնթ. ԺԵ 1—15):

Գ. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅՈՒՆՔ

Իսկ ի՞նչ պիտի պատահի անոնց «ույր ոչ ճանաչեն զԱստված և ոչ հնազանդին Ավետարանին Բրիստոսի»: Թեսաղոնիկեցւոց ուղղած երկրորդ նամակին սկիզբը այսպես կբացատրե հեթանոսաց առաքյալը, անոնց վիճակված կացության մասին—«Ի բոց հրոյ առնու զվրէժ յայնցանէ: Աստուծո ներկայութենէն և ի փառաց զորութենէն նորա պիտի զրկվին, երբ որ գա փառավորվելու յուրայիններուն մեջ և հավատացյալներն պաշտվելու. ահավասիկ մեր վկայությունը որուն հավատացիրք»:

Ապա դարձյալ կգգուշացնե—«Թող ոչ որ ձեզ սնոտի խոսքերով խաբե, Աստուծո բարկությունը պիտի ծավալի անհրաժեշտին և ի վերա որովոց անհավանության. մեղավորները չեն կրնար արքայությունը ժառանգել: Դուք նախապես ի՞նչ էիք, բայց այժմ մաքրված եք ձեր կեղտերեն ու մեղքերեն, արդարացած եք հանուն Հիսուսի Բրիստոսի և ի Հոգին Աստուծո մերոք»:

Այժմ հավատքով կապիրք, բայց երանելի այն օրը Իր տեսության պիտի արժանանաք: Այժմ իբրև թե աղոտ պատկերի մը մեջեն փոքր ի շատե խելամուտ ենք, այն ատեն, պիտի ճանչնանք զԱյն լրիվ:

Ապա հիմնալի հայտնատեսությամբ Պողոս առաքյալ կհավելու—«Ներկայիս մեր կըրած նեղություններն ու տառապանքը ոչինչ են բաղդատմամբ այն փառքին որ պիտի հայտնվի մեզի համար: Տիեզերքը ամբողջ կսպասե ակնկալությամբ որ հայտնվի Աստուծո փառքը Իր զավակներուն: Բոլոր արարածներն ալ կհեծեն և նեղություններու մեջ են, այսպես ստեղծված ենք. բայց միշտ հույս ունինք, մահվան կապանքներն պիտի ազատինք և մտնենք Աստուծո որդիներուն ազատության և փառքին մեջ» (Հռովմ. 8. 18—24):

Աստված ամեն ինչ ստեղծեց Բրիստոսով. «Զի նովա հաստատեցաւ ամենայն որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի, որ երեւին եւ որ ոչն երեւին: Զի նա է յառաջ քան ժամանակ»: Ամեն ինչ Իրմով կա. «Ի տրնտեսության լրման ժամանակաց, երկինքի և երկրի վրա ամեն ինչ հինգքյան պիտի բովանդակե: Հետո կատարած: Բրիստոս թագավորությունը Հոր կհանձնե խափանելով, ջնջելով ամեն կարգի իշխանություն, զորություն: Բոլոր հակառակորդները կդնեն ի ներքո ոտից յուրոց: Խափանվելիք վերջին թշնամին մահն է անշուշտ: Իսկ երբոր Որդին ալ հնազանդվի Անոր որ հնազանդեցնել տվավ ամենքը, այն ատեն Աստված է և պիտի ըլլա ամենայն համենայնի» (Ա. Կորնթ. ԺԵ 24—28):

Այսպես է ս. Հոգւոյն կողմէ Պողոս առաքյալին հայտնված Աստուծո նպատակն ու շնորհաց վարդապետությունը: Առաքյալը ինք շնորհ ստացած ըլլալով, շնորհի մասին կքարոզե և կհայտարարե թե «Աստուծո շնորհով եմ այն, ինչ որ եմ»:

Ծնորհի այս վարդապետությունն է որ մեզ մեղքի կապերն կազատե և կմիացնե Հիսուսի Մարմնուն, այսինքն եկեղեցւո, որը մեզ իբրև ավանդ կպահե մինչև հավորն հետնում, նախ արդարացնելով, հետո աստիճանաբար սրբացնելով, առաջնորդելու համար հավիտենական երանության փառքին, ուր հարազվարճ բերկրանքով Աստուծո դեմ հանդիման պիտի ըլլանք:

Աղեքսանդրիա

Օգտագործված Աղբյուրներ

- 1) La Théologie de St. Paul. W. Morgan
- 2) Commentary On Holy Scripture, London 1934 The Theology Of St. Paul. By H. L. Goudge
- 3) Introduction To The New Testament By J. Stolt